տոյ ջերմին է և բարեբեր, անուանի սեխենեօքն, ո-
րոց 40,000 ածուք ասին լինել։

72. Յարևմից հարաւոյ Նփրկերտոյ և Խաղոյ,
և 'ի հարաւայնում մասին Նահանգիս Տիարպէքիրոյ՝
կայ գլխաւոր վիճակաց Նորին և համանուն ՏԻԱՐ-
ՊԷՔԻՐ տարածեալ յերկոսին ափունս Տիգրիսի, որ
ընդունի երկուստեք վտակս յոլովս, յորս հզօրագոյն
է Պաղման-սու յահեկէ կամ 'ի հիւսիսոյ. ընդարձակ
է յոյժ վիճակն և գեօղք հարիւրաւոր սփռեալք 'ի
դաշտավայրս Նորա և 'ի լեռնակողմանս հարաւոյ, յորս
և յինանիւ չափ բնակեալ են 'ի Հայոց, Թէպէտ և չեն
բազմամարդք. այլ և ոչ քաջ ծանուցեալ են մեզ հան-
դամանք կողմանցս։ Յարևմտակողմն 'ի վերայ գետոյն
Տիգրիսի կայ քաղաքն մեծ ՏԻԱՐՊԷՔԻՐ որ և ԱՄԻԴ
կամ Գաբա-Համիդ, և ըստ նախնեաց մերոց ՏԻԳՐԱՆԱ-
ԿԵՐՏ, բայց ըստ ոմանց ոչ դաստակերտ Տիգրանայ
Արշակունւոյ, այլ Հայկազնեան։ Ի քարաբլուր հրաբը-
խի բարձրաւանդակի կայ 1850', հզօր պարսպօք պա-
տեալ 25' բարձմամբք և 72 աշտարակօք, յորս դաս-
նին յոյն և արաբացի արձանագիրք։ Նշանաւոր շի-
նուածք են միջնաբերդն և աւերակք հնոյ բերդին,
ապարանք Նահանգապետին կամ փաշայի, ագուդայք
ջրոց, վաճառատիզոցք, կարաւանատունք, մզկիթք,
Ներկարանք. ստորերկրեայ ուղի որ հանէ արտաքոյ քա-
ղաքին 'ի Կոնիոյ-գլուխ տեղի. և քան զամենայն նշա-
նաւոր մզկիթն ընդարձակ և հոյակապ Ուլուճամի, որ
կարծի յոմանց Տիրամոր եկեղեցին շինեալ 'ի Հերա-
կլեայ, Թէպէտ և չբերէ արդ զկերպարան եկեղե-
ցւոյ. է Նորա սքանչելակերտ գաւիթ սիւնազարդ։
Վաճառք քաղաքին են սեկ, խաղոխ, ասր, մետաքս,
անօթք բրոնզ և պղնձեայք։ Բնակիչքն են 45-50,000,
յորս Հայք 5 կամ 6,000. գոն և Յակոբիկք, Քաղ-
դէացիք ուղղափառք, Ասորիք, Յոյնք, Հրեայք,
Քուրդք և Թուրքք բազմագոյն քան զայլս։ — Գլխա-
ւորք գիւղորայից Ամդայ են Խըբրդիւ կամ Ս. Թով-
մա, Քէոպի, և Սաղոս կամ Թոխ-Մանոխ-խալ յա-
րևելից քաղաքին, 40 հայաբնակ տամբք. Հայեղիկ,
Աէիրանոր, և այլն։

73. Յարևմտակողմն Ամդայ է վիճակն ՈՐՆՏՐՎԱՆ
կամ ՈՒՏՈՒԱՆ, համանուն քաղաքաւանաւ առ Պաղ-
ման գետով, 800 տամբք, յորս 100 Հայոց, այլք
Եէզիտեայց, որք բազմաթիւք են յայսմ վիճակի և 'ի
մերձակայսն մինչև Ամէտիէ և 'ի Մուսուլ. իսկ Հայոց
վիճակիս առաջնորդ Թեմական նստի 'ի Կոնոնոի վանս։
Կայ և այլ մենաստան անուանի 'ի հարաւոյ Ամդայ
'ի միջի լերանց, Ս. Յովհաննէս անուն, և ունի Թեմ
գեօղս սակաւ։ Լերինք կոչմանս Գաբաճա կոչին, և
'ի Տաւրոսականն պարու համարին։ — Ի հիւսիսոյ
սոցա ընդ մէջ Պաղման և Պիթլիզ գետոց կայ ԽԶՈՒ
կամ ՀԵԶՈՒ վիճակ որ և ԽԵՐԶԱՆ, այն է ԵՐԶՆ Աղձ-
նեաց, զոր յիշեն գիրք մեր. աւանն համանուն և
գիւղորայք վիճակին բնակեալ են 'ի Քրդաց և 'ի Հայոց
և յԱսորւոց սակաւուց։ — Ի հիւսիսոյ Հազուայ և
յելից Դիրբէի գաւառի կայ ՍԱՍՈՒՆՔ կամ ՍԱՍՈՒՆՑ
ԵՐԿԻՐ լեռնային, միջատահման Մշոյ և Տիարպէքի-
րու, բնակիչքն Հայք և Քուրդք աղատաբարոյք, որք
ըստ նախնեաց տարաղու զոր Թովմաս Արծրունի
նկարագրէ 'ի Ի դարու, ցարդ զգենուն, և խարուկս
ոտից ագանին, որ են սօլերք չուանահիւս, վասն ա-
փսանայ և ձիւնապատ լերանց երկրին։ Բերդաւանն
Սասուն կայ յելս ջրոյն Խուլփայ որ խառնի 'ի Պաղ-
ման. 'ի հիւսիսոյ Նորա կայ ԲՈՒՆԱՐԷՆ աւան համա-
նուն վիճակի փոքրս, 100 հայաբնակ տամբք. առ
որով կայ վանքն և ուխտ Ս. Աղբերի շինեալ 'ի Թադէէ
առաքելոյ, և աղբիւր բղխեալ 'ի ներքոյ սեղանոյն,
'ի Թիկանց Նորին ամբառնայ բարձր լեառնն ԽԱՐՋԱՆ։
— Յելից հարաւոյ վիճակիս կայ Խոյթ 'ի Մուշ գա-
ւառի։ Իսկ յելից հարաւոյ Խզուայ՝ ընդ մէջ Պաղ-
ման և Սէօրթ ջրոց կայ վիճակն ՍԷՕՐԹ կամ ՍԱՂԵՐՏ,
'ի ծայրս սահմանաց Նահանգացն Տիարպէքիրու, Մշոյ
և Պօհդանայ Քրդաց, և Թուխ ԽԵՐՀԵԹՔ կամ ՍԵՐ-
ԽԵԹՔ գաւառ Աղձնեաց. որոյ աւանն Սէրթ կամ
Սէրտ կայ 'ի բարձու դաշտի, քարակերտ տամբք. վասն
որոյ ոմանք զսա կարծեցին Տիգրանակերտ զլինեալն
'ի Միջագետս Տիգրանայ։ Բնակիչք 5,000, յորս և
100 երդ Հայոց։ Քուրդք ունին զկողմանքս։

Ե. ԳԱՒԱՌ ՄՈՒՇ ԵՒ ԲԱՂԷՇ

74. Կողմնակալութիւն ՄՇՈՑ, որ ունի գրեաթէ
զսահմանս հնոյ աշխարհին ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ, և յանուն
գլխաւոր գաւառի Նորին՝ ՏԱՐՕՆ կոչի և ցայսօր, ո-
ռոգեալ 'ի Մուրատայ, սահմանի յարևմտից Տիար-
պէքիր Նահանգաւ 'ի Սղերտայ ցՃապաղջուր, 'ի հիւ-
սիսոյ՝ Էրզրումաւ՝ 'ի կեղոյ ցՇէռեան լեառն և
մասամբ Պայէզիտայ, յարևելից՝ Վանաւ, և 'ի հարա-
ւոյ Պօհդան երկրաւ Քրդաց, ընդ մէջ Վանայ և Տիար-
պէքիրու։ — Յարևմտակողմն գաւառիս Մշոյ՝ վիճակք
են 'ի հարաւոյ Կարնոյ և 'ի մտից Բասենոյ՝ ՀՈՒՇԱՐ
և ԹԷՔՄԱՆ 'ի լեռնավայրս հնոյ ՄԱՆԱՆԱԶԻ գաւառի
Բարձր Հայոց. յորս բղխեն արևմտեայ վտակք Երաս-
խայ և խաղան 'ի Բասեան. Թէքման ունի աւան հա-
մանուն, և զՄանանազի գեօղ և զԹագոս աւան, և
զԲէ-ԱԼ-, որոյ բնակիչք Հայք գաղթեցին 'ի Ռուսս։

75. Ի լեռնավայրս Պինկէօլայ կայ ԿԷՕՑՆԻԿ վի-
ճակ, և յարևելից Նորին ՎԱՐԴՈՑ կամ ՎԱՐԴՈՒՀ, ուր
Հօրմազդ տոհմ Քրդաց սփռեալ է. են ընդ նոսին և
Հայք ազատակեցք ցրուեալք 'ի 40 գեօղս, որոց
գլխաւոր է Պաղամ աւան առ Զարպուհուր վտակաւ։
Ի լերինս վիճակիս ասեն լեալ զդրախան Ադամայ։ —
Ի հարաւոյ սորա կայ ՊՕԿԼԱՆ վիճակ սահմանա-
կից ՃապՂՂոյ, և 'ի Նորին հարաւոյ կԻՆՃ և ԽՈՒԼՓ
'ի լեռնակոհակ երկրի յափունս Արածանւոյ. Քուրդք
ունին զսոսա. գլխաւոր գեօղք են ՇԷՒ, ՆԷՐՃԷՒ կամ
ՆԷՐՃԷՒ՝ են և Հայոց տունք, որոց առանձին Թեմ
է Խուլփ։ — Ի հարաւոյ Խուլփայ ընդ մէջ Սասնոյ,
Խզուայ և Մշոյ կայ ԽՈՑԹ վիճակ լեռնային, և 'ի
Նորին հարաւոյ՝ ՍՈՒՍԱՆ, որոց հանդամանք և բնակ-
չացն՝ նման են Սասնոյ, մասն գոլով Նորին հնոյ գա-
ւառի։ Առաջնորդ Հայոց կողմանցս նստի 'ի Մոպէն
Առաքելոյ (Պետրոսի) վանս, մերձ 'ի Մարդ լեառն.
ուր պահի մասն առաքելապատին բերեալ յառաջ
քան զԺ դար 'ի Հայս՝ յառնէ միոջէ որ գնաց 'ի